

## ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԱՆՎԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ\*

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանալի բառեր՝ լեզվանուն, տարբերակայնություն, պատմական բառադիտություն, բառապաշարի զարգացում, կանոնարկում, բառակազմական օրինաչափություն, անգլիացու լեզու, անգլիարեն / անգլիերեն / անգլիարեն / անգլիերեն / անգլերեն, բառարանագրական ավանդույթ, լեզվանվան միասնականացում:

### Նախաբան

Բազմաթիվ լեզվանուններ գործածվել են հայերեն առաջին գրավոր աղբյուրներում՝ մատենագիրների երկեր, Աստվածաշունչ մատյան, քերականական աշխատություններ և այլն, ինչպես՝ հայերեն, յունարեն, եբրայեցերեն, պարսկերեն, հռոմայեցերեն և այլն: Դարերի ընթացքում հայերեն լեզվանունների ցանկը համարվել է նորանոր միավորներով, այդ թվում՝ եվրոպական լեզուների անուններով:

Մի շարք լեզվանուններ տարբեր ժամանակներում ունեցել են տարբերակներ, օրինակ՝ հրեաների լեզուն անվանելու համար գործածվել են եբրայեցերեն, հրեարեն, հրեերեն, հրեայերեն, այժմ ավելի շատ՝ եբրայերեն տարբերակային լեզվանունները<sup>1</sup>: Տարբերակայնություն կա նաև բալթիական, հնդկական և ուրիշ լեզուների անուններում<sup>2</sup>, ուստի արդիական է հայերեն լեզվանունների կանոնարկումը, գիտական անվանացանկի պատրաստումը: Պատմական բառադիտության տեսանկյունից առհասարակ հետաքրքրական է հայերեն լեզվանունների պատմությունը՝ զարգացման ընթացքը:

Եվրոպական լեզուներից արդի աշխարհում մեծ տարածում ունի անգլերենը, որը պաշտոնական լեզու է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում (ֆրանսերենի հետ), Ավստրալիայում, Նոր Զելանդիայում (մաորիերենի ու ժեստերի լեզվի հետ) և մի քանի տասնյակ ուրիշ պետություններում, պաշտոնական կամ աշխատանքային լեզվի կարգավիճակ ունի միջազգային ու համաշխարհային բազմաթիվ կազմակերպություններում: Անգլերենը խոսողների թվով աշխարհի երրորդ մայրենի լեզուն է (չինարենից և

\* Ներկայացվել է 18. IV. 2022 թ., գրախոսվել է 25. IV. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. V. 2022 թ.:

<sup>1</sup> Գյուրջինյան. 2021, № 3, 3–17, Գյուրջինյան. 2021, № 3, 216–231:

<sup>2</sup> Գյուրջինյան. 2021, № 2, 217–239, Գյուրջինյան. 2021, № 4, 3–17, Գյուրջինյան. 2021, 17–37:

խապաներենից հետո), հաղորդակցվողների թվով երկրորդը: Ժամանակակից գիտությունն ամենատարածված լեզուն է:

Անգլիացիների լեզվի անունը ե՞րբ է հայտնվել հայերենում, պատմական ինչպիսի՞ ընթացք է ունեցել, արդյոք տարբերակայնություն ունի՞ (կամ ունեցե՞լ է): Հայոց լեզվի պատմական բառարանը պիտի տար այս հարցերի պատասխանը, սակայն հայերենի նման բառարան տակավին չկա: Բառարանային և բնագրային տվյալները համադրելով կարող ենք ասել, որ անգլիացիների լեզուն անվանող միավոր գրավոր հայերենում հայտնվել է նոր ժամանակներում՝ աշխարհաբարում: Նախաաշխարհաբարյան ժամանակահատվածում լեզուն անվանող բառի չգոյությունը բացատրելի է, եթե հաշվի առնենք անգլերենի՝ իբրև լեզվի կազմավորման ժամանակն ու անգլիացիների, Անգլիայի և անգլերենի հետ հայերի առնչությունների պատմությունը:

Հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական խմբի արևմտյան ճյուղին պատկանող անգլերենն անցել է երեք շրջան՝ հին անգլերեն կամ անգլոսաքսոներեն (մինչև XI դարի վերջերը), միջին անգլերեն (XI–XV դդ.) և նոր կամ ժամանակակից անգլերեն կամ էլ պարզապես անգլերեն (XVI դարից ջայժմ)<sup>3</sup>: Անգլոսաքսոներենը V–VI դդ. Անգլիան նվաճած գերմանական ցեղերի՝ անգլերի, սաքսերի և յուտերի լեզուն է: Քանի որ Բրիտանիա ներխուժած գերմանական ցեղերի մեջ անգլերեն ու սաքսերը մեծամասնություն էին, այդ պատճառով էլ բոլոր ցեղերին ընդհանուր անունով կոչում են անգլո-սաքսեր (բրիտները՝ Բրիտանիայի կելտական բնակչությունը ստրկացվեց, բնաջնջվեց կամ գաղթեց Գալլիա)<sup>4</sup>: Ներկայիս անգլերեն լեզվանվան (և նրա նախորդների) հիմքում ընկել է անգլ ցեղանունը:

Հայերն անգլիացիների հետ մոտիկից ծանոթացել են XII–XIII դդ.՝ Կիլիկյան Հայաստանում խաչակրաց արշավանքների ժամանակ<sup>5</sup>: Հայ-անգլիական առնչությունները գրեթե դադարում են Կիլիկյան Հայաստանի անկումից հետո: Դրանք սերտանում են Հնդկաստանում XVII դարի վերջին քառորդին՝ անգլիական տիրապետության շրջանում: Հայերը Հնդկաստանում եղան անգլիացիների նախ դաշնակից և օգնական, ապա՝ հպատակ ու անգլիական քաղաքակրթության տարածողներ<sup>6</sup>: XVIII դարի սկզբից հնդկահայ հարուստ ընտանիքներն անգլիացիների էին հրավիրում որպես տնային ուսուցիչներ<sup>7</sup>, այս դարում հայկական տարբեր գաղթավայրերից, մասնավորապես Հնդկաստանից հայեր են բնակություն հաստատում Անգլիայում ուսումնառության, աշխատանքի և այլ նպատակներով: Հայերեն պարբերականներում անդրադարձներ են եղել Անգլիային, նրա անցուղարձին, գիտությունը և մշակույթին ընդհանրապես, հայոց լեզվով գրվել են անգլերենի ուսումնական ձեռնարկներ,

<sup>3</sup> Ա ճ ա ո յ ա ն. 1955, 511–512, Պ ե տ ռ ո ս յ ա ն, Գ ա լ ս տ յ ա ն, Ղ ա ր ա - գ յ ու լ յ ա ն. 1975, 11:

<sup>4</sup> Միջին դարերի պատմություն. 1975, 135:

<sup>5</sup> Ա բ բ ա հ ա մ յ ա ն. 1967, 180:

<sup>6</sup> Ա ճ ա ո յ ա ն. 2002, 745–752:

<sup>7</sup> Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.). 2013, 126, 128:

կազմվել բառարաններ, արվել են թարգմանություններ: Այլևայլ առումներով հարկ է եղել գործածելու անգլիացիների լեզվի անունը:

Արդի հայերենում այժմ գործածվող անգլերեն լեզվանունից առաջ հայերենում չըջանառվել են մի շարք տարբերակներ, և լեզվանունը ներկայիս ձևը ձեռք է բերել տեղական ժամանակի ընթացքում: Հայոց լեզվի զարգացման վերջին երկու հարյուրամյակների ընթացքում անգլերեն անունն ունեցել է բառային-բառակազմական մի շարք տարբերակներ, որոնք կառուցվածքով բառակապակցություններ և բառեր են<sup>8</sup>:

Քննենք տարբերակային այդ անունները, ցույց տանք ներկայիս ընդունված լեզվանվան ձևավորման պատմական ընթացքը հայերենի գրական երկու ճյուղերում և համահայերենյան մակարդակում:

#### Անգլիացուց բարբառ

Անգլիացիների լեզվի հայերեն առաջին անունը բառակապակցություն է՝ անգլիացուց բարբառ: XVIII դ. աշխարհաբարի շրջանում անգլիացին կոչվում էր անգլիացի, երկիրը՝ Անգլիա (սեռ. Անգլիոյ), երկրին և ժողովրդին վերաբերող ածականն անգլիական-ն է: Լ և Ղ հնչյունները լծորդ են<sup>9</sup> բնիկ հայերեն (նաև բարբառային) մի շարք բառերում, ինչպես՝ ծիղ – ծիլ, տիղմ – տիլ, միղ – միլ և այլն: Ղ-ն ծագումնաբանորեն հանգում է հնդեվրոպական 1 հնչյունին: Այդ արժեքը երևում է նաև փոխառյալ բառերում. փոխատու լեզվի 1-ն հայերենում արտահայտված է դ-ով, ինչպես հունական անձնանունների գրադարձություններում՝ Աղեքսանդր, Պղատոն, Ղուկաս և այլն, հմմտ. նաև կրկնակի գրություն ունեցող լամբար – դամբար և այլն<sup>10</sup>:

Ըստ մեր ունեցած տվյալների՝ տպագիր խոսքում գործածություն վաղագույն վկայությունը XVIII դարի վերջից է, հայերեն առաջին «Ազդարար» պարբերականի առաջին համարում. «... հանդերձ որոյ թարգմանութեամբն ի անգլիացուց բարբառս, վերաբերող լեզուին հայոց»<sup>11</sup>: Հաջորդ համարում բառակապակցությունն ամփոփվել է՝ «թարգմանեալ Յանգլիացուց»<sup>12</sup>:

Բարբառ բազմիմաստ բառը գրաբարում նշանակում է «մարդկային ձայն, լեզու, խոսք, որևէ ազգի լեզու» («մերթ նշանակէ զլեզու ազգաց, որովք ի միմեանց որոշին»)՝<sup>13</sup> բառի եզրաբանական իմաստը՝ «լեզվի տարբերակը որևէ

<sup>8</sup> «Լեզվաբանական բառարանը» շատ լեզվանունների բառահոգւովածներում նշում է գլխաբառ լեզվանվան որևէ տարբերակ (կամ տարբերակներ), ինչպես՝ օրիյա – օդրի – ուրիա, ֆլամանդերեն – ֆլամաներեն և այլն (Պետրոսյան, Գալստյան, Ղարաբաղյան. 1975, 315): Անգլերեն-ի պարագայում, սակայն, որևէ տարբերակ չի հիշատակվում:

<sup>9</sup> Հմմտ. Մուրադյան. 1982, 207–209:

<sup>10</sup> Սրանց մասին հանգամանորեն տե՛ս Արսէն Կոմիտաս Բագրատունի. 1852, գրքին կցված «Յաղագս հնչման և ել տառից մերոց» ծավալուն հոդվածը (1–22):

<sup>11</sup> «Ազդարար» (Մազրաս), 1794, հ. 1, 14:

<sup>12</sup> «Ազդարար», 1794, հ. 2, 49: Ի դեպ, նույն համարում (էջ 86–88) անգլիացիքն, անգլիացուց բառաձևերը 1-ով են:

<sup>13</sup> Մխիթար Սեբաստացի. 1749, 137–138:

վայրում, լեզվի տարածքային տարբերակը», որն այժմ բառի հիմնական իմաստն է, հետագայում է ձևավորվել: Անգղիացուց բարբառ-ը կազմվել է գրաբարյան նման կապակցությունների համաբանությամբ: Հմմտ. «Խօսեցաւ սուրբն Գայիանէ ի բարբառ Հռոմայեցւոց» (Ագաթանգեղոս)<sup>14</sup>, «Այս մատեան ... ի Քաղղեացւոց բարբառոյ փոխեալ է ի յոյն» (Մովսէս Խորենացի)<sup>15</sup>:

XIX դարի առաջին կեսին այս կառույցը գործածվում էր լեզվանվան արժեքով: Հիշենք Ալ. Խուզաբաշյանցի հայտնի բառարանի վերնագիրը՝ «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» (Մոսկվա, 1838): Հասկանալի է, որ ռուսաց բարբառը ռուսաց լեզուն է՝ ռուսերենը:

### Անգղիական բարբառ

Անգղիացուց բարբառ բառակապակցության մի տարբերակն է անգղիական բարբառ անվանումը: «Ժողովրդանունից / երկրանունից կազմված ածական + բարբառ» կառույցի նախօրինակներ կան գրաբարում, ինչպես օրինակ՝ «յասորական բարբառոյն»<sup>16</sup>: Կառույցը գործածական էր նաև նոր ժամանակներում: Համեմատենք Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակության վերնագիրը՝ «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ» (Վենետիկ, 1805):

Իր ժամանակի լեզվամտածողությամբ անգղիական բարբառ-ը սովորական էր, թեև քիչ է գործածվել: Օրինակներ՝ «... թարգմանեալք ի սինէացւոց լեզուէ յԱնգղիական բարբառ: Փոխեաց ի մերս՝ Գէորգ Աւետ Զաքարեան Զուղայեցի ի Պաթաւիա»<sup>17</sup>, «Ի մէջ լեզուացն Եւրոպայ՝ թէ և ոչ զառաջինն, բայց զկարևորագունին ունի զտեղի Անգղիականն բարբառ»<sup>18</sup>:

Հետագայում գործածվել է նաև անգլիական բարբառ-ը (լ-ով): Օրինակ՝ «Սմին բաղդի հանդիպեալ է կամ հանդիպեսցի տակաւ և անգլիականն բարբառ»<sup>19</sup>:

### Անգղիացուց լեզու

V դարի հայերենում սովորական է «ժողովրդի անվան հոգնակի սեռական հոլովածն + լեզու» լեզվանվանական կաղապարը: Օրինակ՝ «Քանզի սատանայ յԵբրայեցւոց և յԱսորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի» (Նզնիկ Կողբացի)<sup>20</sup>:

Այդպես էլ անգղիացուց լեզու բառակապակցությունն է: XIX դարի սկզբին գործածվել է բառարանի վերնագրում՝ «Փոքրիկ բառագիր Անգղիացւոց լեզուէ՝ թարգմանեալ ի հայ բարբառ»<sup>21</sup>: Սա, ի դեպ, անգլերեն-հայերեն

<sup>14</sup> Հայկական համաբարբառ 4/1. 1973, 222:

<sup>15</sup> Հայկական համաբարբառ 7/1. 1975, 359:

<sup>16</sup> Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1836, 442:

<sup>17</sup> Տնտեսութիւն մարդկային կենաց: Խրատք պիտանիք (Առածք սինէականք). 1845 (տիտղոսաթերթից):

<sup>18</sup> Աւգերեան, Պրէնտեան. 1868, ԺԱ:

<sup>19</sup> Պետրոսեան. 1875–79, V:

<sup>20</sup> Հայկական համաբարբառ 1. 1972, 422:

<sup>21</sup> Սիմէօնեան. 1803:

առաջին բառարանն է<sup>22</sup>: Հանդիպում է նաև մամուլում «Անգլիացու լեզուն եղիսաբէթ թագուհւոյն ժամանակ» (Մ. Աղաբեգյան, «Բառաքնական»)՝<sup>23</sup>:

Նման կառույցներ են ժամանակակից հայերենում գործածվող հայոց լեզու, ռուսաց լեզու, վրաց լեզու, պարսից լեզու լեզվանունները, բայց սրանք, ինչպես տեսնում ենք, -եցի / -ացի ածանցով հիմքերից չեն կազմվել, այլ՝ պարզ արմատական:

### Անգլիական լեզու

Անգլիացիների լեզուն անվանելու համար հայերենում գործածվել է նաև անգլիական լեզու «անգլիացիների կամ Անգլիայի լեզուն» բառակապակցությունը: Սա էլ «ժողովրդանուն / երկրանուն հիմքից կազմված ածական+լեզու» կաղապարի իրացումն է նոր հայերենում, որի նախորինակները կան հին հայերենում: Այսպես՝ «Հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական» և «Ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին կոչի Դուին (Մովսես Խորենացի)»<sup>24</sup>: Նույնատիպ գաղղիական լեզու «Ֆրանսերեն», հայկական լեզու «հայերեն» և նման կապակցություններն այժմ հնացած են, գրեթե անգործածական: Արդի փուլում այս կարգի կապակցությունները նշանակում են «որևէ լեզվաբնույթի»՝ խմբի՝ ճյուղի պատկանող լեզու», ինչպես՝ իրանական լեզու, հնդկական լեզու, գերմանական լեզու, սլավոնական լեզու, թյուրքական լեզու:

1825 թ. վենետիկյան հայերեն-անգլերեն բառարանը կոչվում էր «Բառարան հայերէն և անգլիական» («Dictionary Armenian and English»), որից հստակ կարող ենք եզրակացնել՝ լեզվանունը տակավին ձևավորված չէ: Նույն բառարանի լեզու բառահոլովածում տրված է այս թարգմանությունը՝ անգլիական լեզու – the English language<sup>25</sup>: Հմտ. նաև «Հրահանգք անգլիական լեզուի»<sup>26</sup>: Հանդիպում է նույն դարի վերջին քառորդում ևս՝ «Կրթարան անգլիական լեզուի»<sup>27</sup>:

### Անգլիարէն

Անգլիարէն-ն անգլիացիների լեզվի հայերեն բառային ամենավաղ անունն է: Կազմվել է անգլիացի բառից՝ -ացի ածանցի կրճատմամբ, և «լեզու» նշանակող -արէն ածանցով: Հետաքրքրական է, որ կիրառվել է ածանցի ոչ հաճախադեպ -արէն տարբերակը: Գրաբարում յունարէն-ից բացի -արէն ածանցով են կազմվել հրէարէն «հրեերեն», հուռոմարէն / հուլմէարէն «լատիներեն»<sup>28</sup>, լիկայոնարէն<sup>29</sup> «փոքրասիական Լիկայոնիա երկրի բնակիչների լիկայոնացիների լեզուն», պարթևարէն «պարթևների լեզուն» և քաղդէարէն

<sup>22</sup> Գ ա ս պ ա ռ յ ա ն. 1968, 151:

<sup>23</sup> «Կռունկ Հայոց աշխարհին» (Թիֆլիս), 1862, թիւ ԺԱ, 888:

<sup>24</sup> Հայկական համաբարբառ 7/1. 1975, 851:

<sup>25</sup> Պրէնտեան, Աւգերեան. 1825, 247:

<sup>26</sup> «Բազմավէպ» (Վենետիկ), 1847, թիւ 23, 361:

<sup>27</sup> Ի ս ա վ եր տ ե ն ց. 1880:

<sup>28</sup> Առձեռն բառարան հայկազնեան լեզուի. 1865, 504:

<sup>29</sup> Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց. 1805, Գործք առաքելոց, 14.10:

«քաղղեացիների լեզուն, քաղղեացիների լեզվով»<sup>30</sup> (սրանց աշխարհաբարում ավելացել է չինարեն-ը): Դժվար է ասել, թե անգլիարեն-ի պարագայում սկզբնապես ինչո՞ւ է նախապատվությունը տրվել հենց –արեն ամանցին:

Ո՞րն է անգլիարեն տարբերակի կիրառման ժամանակաշրջանը: Բերենք մի քանի հստակ թվականներ: 1818 թ. Մխիթարյանները տպագրում են Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը 16 լեզվով, այդ թվում՝ անգլիարեն<sup>31</sup>: 1821 թ. կրկին Վենետիկում լույս է տեսնում Հարություն վրդ. Ավգերյանի «Բառարան անգլիարեն եւ հայերեն»-ի առաջին հատորը<sup>32</sup>: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ XIX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում անգլիարեն տարբերակի գործածությունը կայունացել է, որն ամրապնդվել է հատկապես բառարանի վերնագրում գործածվելու միջոցով:

Տարբերակի կայունացման հարցում նկատելի է մխիթարյան հայրերի դերը: Լեզվանվան այս տարբերակը գործածված ենք տեսնում հատկապես հայր Ղևոնդ Ալիշանի աշխատություններում: Ահավասիկ մի քանի օրինակներ, որոնք ներկայացնում ենք ըստ ժամանակագրական հերթականության. «Իբրեւ դար մը վերջը (1780) ի Լոնտրա տպագրած է Հաւատովն չորս լեզուով, հայ, լատին, փռանկ եւ անգլիարեն» («Շնորհալի եւ պարագայ իւր»<sup>33</sup>), «Գտանին եւ այլ զուգաժամանակ տպագրութիւնք ի փռանկ լեզու՝ սակաւ ինչ զանազանեայ շարաբանութեամբքն. նոյնպէս եւ անգլիարեն տպագրեալ ի միջոցի 1520-30 ամաց» («Սիսուան»<sup>34</sup>), «... մօտ տարիներումս թարգմանուած եւ ծանոթագրուած անգլիարեն, գերմաներեն եւ փռանկերեն» («Արշալոյս քրիստոնէութեան Հայոց»<sup>35</sup>):

Լեզվանվան այս տարբերակը գործածվել է նաև արևելահայերենում: Օրինակ Բաֆֆուց. «Բայց մի քանի աշակերտներ միայն, մինչև այսօր սովորել են անգլիարեն» («Արգոյ բարեկամ, Յովհաննէս Քաթանեանց», 1861 թ.<sup>36</sup>): Նույն շրջանից լեզվանվան գործածության ևս մեկ նմուշ. «Աստուածաշունչ

<sup>30</sup> Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1837, 635, 971:

<sup>31</sup> Շնորհալի. 1818 (գրքի վրա հայկական թվականը ճիշտ է դրված (ՌՄԿԷ), այնինչ արաբական թվականը տպագրական սխալի պատճառով 1813 է):

<sup>32</sup> Աւգերեան. 1821: Հետաքրքրական է, որ ընդամենը չորս տարի անց՝ 1825-ին, լույս տեսած բառարանի վերնագրում անգլիարեն-ի փոխարեն անգլիական բառն է գործածվում (Պրէնտեան, Աւգերեան. 1825): Նույն բառն է քերականության գրքի վերնագրում (Աւգերեան. 1819): Սակարող ենք մեկնաբանել որպես անգլիական լեզու բառակապակցության յուրատեսակ ամփոփում-կրճատում:

<sup>33</sup> Ալիշան. 1873, 250:

<sup>34</sup> Ալիշան. 1885, 341:

<sup>35</sup> Ալիշան. 1901, 384:

<sup>36</sup> «Հիւսիսափայլ» (Մոսկվա) 1861, թիւ 11, 396: Արձակագրի 12-հատորյակում ուղղագրությունը փոխելիս խմբագրվել է նաև լեզվանունը՝ դառնալով պարզապես անգլերեն (Րաֆֆի. 1991, 75): Մեկ այլ հրատարակության մեջ անգլիարեն-ը դարձել է անգլիերեն (Րաֆֆի. 1955, 26): Սա ճիշտ մոտեցում չէ. բառի այսպիսի խաթարումը լեզվանվան պատմական զարգացման ընթացքի վերաբերյալ սխալ պատկերացման հիմք կարող է դառնալ: Այդպես անգլերեն տարբերակը վերաբերելի է դառնում 1861-ին, որն իրականությունը չի համապատասխանում:

գրոց Անգլիարէն լեզուով թարգմանութիւնը» (Գիզո, «Պատմութիւն քաղաքակրթութեան», թարգմ.՝ Մ. Աղաբեգյան<sup>37</sup>): Կարող ենք եզրակացնել, որ անգլիարէն-ը համահայերենյան բնույթ ունի:

1875-ին անգլիարէն-ը գլխաբառ է դարձել հայ-անգլերեն բառարանում, նրա հետ նույն շարքում՝ անգլիաբան, անգլիաբանեմ, անգլիաբանութիւն, անգլիախօս, անգլիական, անգլիացի բառերը<sup>38</sup>: Բայց հաշվի առնենք այն փաստը, որ բառարանի վերնագրում և առաջաբանում բառարանագիրը գործածել է լ-ով տարբերակը՝ անգլիարէն: Սա նշանակում է, որ վերջինս հաղթել է: Ավանդույթի ուժով, սակայն, անգլիարէն-ը երկար ժամանակ մինչև XX դարի կեսեր, տեղ է գտել բառարանների բառացանկերում<sup>39</sup>:

### Անգլիարէն

Լեզվանվան այս տարբերակը՝ անգլիարէն-ը, հանդիպում է XIX դարի վերջին: Անգլիարէն-ի պես —պրեն ածանցով է կազմվել, սակայն դ-ի փոխարեն լ հնչյունն է. այսպես այն «մոտենում է» անգլերենի հնչմանը (English, եվրոպական մյուս լեզուներում էլ լ-ով է. հմմտ. ֆրանս. *Anglais*, իտալ. *Inglese*, գերմ. *Englisch* և այլն):

Ինչպես ասվեց, հ. Մատաթիա վարդապետ Պետրոսյանի բառարանի վերնագրում կա այս տարբերակը՝ «Նոր բառգիրք հայ-անգլիարէն» (Վենետիկ, 1875-79), գործածվել է առաջաբանում. «Ձանգլիարէն բառս ըստ այլ և այլ նշանակութեանց հայոյն կարգեցաք»<sup>40</sup>:

Ղ. Ալիշանն իր գիտական երկարատև գործունեության ընթացքում հազվադեպ, բայց գործածել է այս տարբերակը ևս. «Հետաքննական իմն է, որ ասոր նման թիոց պտուղներն՝ անգլիարէն այլ *Berry կ'ըսուին ...*» («Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն»<sup>41</sup>), «... փռանկաց ուսմանց պաշտօնէի շնորհիւ առ Անգլիացի գիտնականս, ի լոյս ընծայեցաւ, թէ բնագիր լեզուան եւ թէ անգլիարէն թարգմանութեամբ» («Աբուսահլ Հայ»<sup>42</sup>): Միևնույն ածանցով կազմված, բայց ղ / լ լծորդ հնչյուններով տարբերվող անունների առկայությունը նույն հեղինակի խոսքում լեզվանվան ոչ միայն զուգաձևության, այլև հաստատուն ձևի փնտրտուքի, լեզվանվան կայացման ընթացքի մի դրսևորում է:

Այս տարբերակը լայն տարածում չի ունեցել, արևելահայերենում գրեթե չի հանդիպում: Բաֆֆու արդեն հիշատակված նամակներից մեկում անգլիարէն-

<sup>37</sup> «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիւ Ը, 576: Հաջորդ համարում բառը վրիպմամբ (թերևս գաղղիերէն-ի նմանությամբ) երկու դ-ով է տպվել՝ անգղղիարէն («Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիւ Թ, 657):

<sup>38</sup> Պետրոսեան. 1875-79, 27:

<sup>39</sup> Տե՛ս, օրինակ, Պայեան. 1926, 137:

<sup>40</sup> Պետրոսեան. 1875-79, VIII:

<sup>41</sup> Ալիշան. 1895, 542 (Պրբի. Պրենի): Միասնական ձևի բացակայության հավելյալ վկայություն է այն, որ այս աշխատության մեկ այլ էջում հեղինակը գործածել է ղ-ով տարբերակը (թեև համառոտագրությամբ). «Հին և նոր գերմ. և անգլ. լեզուաց մէջ լսուի այս ձայնս» [Ալիշան. 1895, 554 (Սալոր. Սալորենի)]:

<sup>42</sup> Ալիշան. 1895, 7:

ի հետ գործածվել է նաև անգլիարեն տարբերակը. «... թարգմանչի պաշտօն է նաև տալիս այնպիսիներին, որք գիտէին մասնաւոր ֆրանսիարէն, անգլիարէն կամ գերմաներէն և այլն» (Հիւսիսափայլ, 1961, թիւ 11, 397)<sup>43</sup>:

### Անգլիերէն

Անգլիերէն տարբերակում պահպանվում է դ-ն, բայց գործածվում է –երէն ածանցը, որը հայերեն լեզվանուններում գրեթե ընդհանրական բնույթ ունի: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ որոշակի ժամանակաշրջանում գործել է անգլիարէն – անգլիարէն – անգլիերէն զուգաձևությունը:

Անգլիերէն տարբերակը գործածվել է հայերենի գրական երկու տարբերակներում էլ: Արևելահայերենի օրինակներ Բաֆֆուց. «Պետք է սովորել եվրոպական լեզուներ, գաղղիերեն, անգլիերեն, գերմաներեն, որպեսզի ուղղակի եվրոպայի երևելի վաճառականական քաղաքների հետ ... հարաբերություններ ունենալ» («Վաճառականությունը հայերի մեջ», 1872 թ.), «Ընթերցարանը մեկ ու կես տարվա ընթացքում ունեցավ 700 հատոր հայերեն, գաղղիերեն, ռուսերեն, հունարեն, անգլիերեն, պարսկերեն, և այլ գրքեր» («Պարսկաստան», 1876 թ.)<sup>44</sup>, «Այդ երգի անգլիերեն թարգմանությունը գիտեր տիկինը» և «Նրանք խոսում էին անգլիերեն» («Կայծեր», 1887 թ.)<sup>45</sup>, «Նա կարճ միջոցում սովորեց ոչ միայն հայոց հին ու նոր լեզուները, այլ բավականաչափ գաղղիերեն և անգլիերեն» («Սալբի») <sup>46</sup>:

Արևմտահայերենում լեզվանվան այս տարբերակը թերևս ավելի լայն տարածում ունեցավ: Ղ. Ալիշանը գործածել է նաև սա. «... երկար ետպեղուկան արձանագրությունամբ (անգլիերէն, պարսկերէն եւ յունարէն)» («Այրարատ»<sup>47</sup>), «... տեղեկանան եւ գոհանան թարգմանությունամբք, որք հրատարակուած են ի լատին, փոանկ, իտալ, ռուս, անգլիերէն, հունգարերէն, նաեւ թուրք լեզուօք» («Հայապատում»<sup>48</sup>):

Հ. Պարոնյանն անգլիացիների լեզվի անվան հարցում հետևողական է եղել՝ կիրառելով անգլիերէն տարբերակը<sup>49</sup>: Այսպես. «Կը հայտնեք թե հայերեն, ֆրանսերեն և անգլիերեն լեզվաց հմուտ եք» («Նամականի»<sup>50</sup>, 1873 թ.) «... այս տարիքին մեջ հոն կսորվին հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն, անգլիերեն, գերմաներեն ...» և «անգլիերեն խոսող հայն առաջին անգամ Սամաթիայեն ելած է. ջրհանկիրներու մէջ ալ այսօր անգլիերեն կարդացողներ կգտնվին» («Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ»<sup>51</sup>, 1880 թ.), «Դպրոցական

<sup>43</sup> Բաֆֆու երկերի հետագա հրատարակություններում սա ևս փոխվել է՝ դառնալով անգլերեն (Բ ա ֆ ֆ ի. 1955, 27, Բ ա ֆ ֆ ի. 1991, 75):

<sup>44</sup> Բ ա ֆ ֆ ի. 1991, 100, 382:

<sup>45</sup> Բ ա ֆ ֆ ի. 1986, 401:

<sup>46</sup> Բ ա ֆ ֆ ի. 1983, 84: Բաֆֆու վաղ շրջանի գործերից է, բայց հրատարակվել է 1911-ին:

<sup>47</sup> Ա լ ի շ ա ն. 1890, 224:

<sup>48</sup> Ա լ ի շ ա ն. 1901, 14:

<sup>49</sup> Հ. Պարոնյանի խոսքում հավանաբար մեկ բացառություն կա. «Որքան աղէկ պիտի ըլլար, եթէ քիչ մը անգլիերէն խօսէր» (Պ ա ը ո ն յ ա ն. 1968, 288):

<sup>50</sup> Պ ա ը ո ն յ ա ն. 1968, 175:

<sup>51</sup> Պ ա ը ո ն յ ա ն. 1964, հ. 3, 135, 203–204:



ասպարեզեն առևտրական ասպարեզը ցատկեց Մկրտիչ Էֆենտի, և մեկ կողմէ գաղիներեն, անգլիերեն և տոմարակալութիւն ունելով, մյուս կողմէ ստակ շահելու հետամտեցավ» («Ազգային ջոջեր»<sup>52</sup>, 1880 թ.) և այլն:

Նախաեղեռնյան արևմտահայերենում անգլիերէն-ն էր գործածվող հիմնական տարբերակը: Օրինակներ՝ «Նա ոչ միայն թրքերենի և ֆրանսերենի հմուտ էր, այլ նաև գիտեր անգլիերեն» (Արփիարյան. «Ապուշը», 1886 թ.)<sup>53</sup>, «Հայերէն չե՞ս հասկնար – ես անգլիերէն ալ գիտեմ» (Թլկատինցի. «Զալում տղան»<sup>54</sup>, 1904 թ.) և այլն:

Երբեմն նույն գրողի լեզվում կարող ենք տեսնել թե՛ անգլիերէն և թե՛ անգլիերէն տարբերակները: Այդպես է, օրինակ, Զ. Եսայանի տարբեր տարիներին գրված ստեղծագործություններում. «Օրիորդ Աննիկ ոչ միայն խորապէս հմուտ էր իր լեզուին, այլ նաև գիտէր ֆրանսերէն եւ անգլիերէն» («Շնորհքով մարդիկ», 1907 թ.) և «Վոկսը կը հրատարակէ շաբաթական բիւլլետէն մը չորս գլխաւոր լեզուներով (Ռուսերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն եւ Գերմաներէն)» («Պրոմէթէոս ազատագրված (ճամբորդական նոթեր)», 1927 թ.)<sup>55</sup>:

Վերոբերյալ օրինակները հստակ ցույց են տալիս, որ անգլիերեն տարբերակն իր գործածության շրջանում համահայերենյան բնույթ ուներ:

### Անգլիերէն

Հայերենում լեզվանվան պատմական զարգացումը հանգեցրեց անգլիերէն տարբերակին, որը XIX դարի երկրորդ կեսին կիրառվում էր անգլիերէն-ին գուգահեռ: Օրինակներ՝ «Եկեալ էին ի Կոստանդնուպոլիս քարոզել եւ տարածել զաղանդ իւրեանց՝ պատճառաւ ուսուցանելոյ մանկանց ճիւղաբար զլեզուն Անգլիերէն, զաշխարհագրութիւն եւ զթուաբանութիւն», «Բացին գիշերօթիկ դպրոցս ի Պերա եւ ի Պէպէք գիւղ յուսումն Գաղղիերէն եւ Անգլիերէն լեզուաց» (Ա. Պերպերյան, «Պատմութիւն Հայոց»<sup>56</sup>, 1871 թ.): Ղ / լ ծորդության հարցը աստիճանաբար լուծվում էր անգլիերէն-ի օգտին:

Ղ. Ալիշանի խոսքում լեզվանվան այս տարբերակը ևս գործածվել է. «Գրուածն ... թարգմանուեր է ի փռանկերէն, անգլիերէն, հոլանդերէն եւ դանիերէն» («Հայ-Վենետ կամ յարոնչութիւնք Հայոց եւ վենետաց»<sup>57</sup>, 1896 թ.): Այսպիսով Ալիշանի խոսքում գործածվել են անգլիարէն, անգլիերէն, անգլիարէն և անգլիերէն տարբերակները: Սա հստակ ցուցիչ է այն բանի, որ երկարատե ժամանակի ընթացքում դրանցից մեկը վերջնականապես չէր կայունացել և համընդհանուր ընդունելության չէր արժանացել:

Արևմտահայ գրականության և մամուլի լեզվում հետզհետե իշխող է դառնում անգլիերէն տարբերակը: Օրինակներ՝ «Օրիորդ Ֆրնտրքեան՝ անգլիերէն բանախօսութիւն մը կը կարդայ. չեմ հասկնար Շէքսպիրի լեզուն» (Զոհրապ. «Հոմ քոլեջ»<sup>58</sup>, 1891 թ.), «Թերխաշ Հայերէն ու անգլիերէն բառերով

<sup>52</sup> Պարոնյան. 1964, հ. 2, 239:

<sup>53</sup> Արփիարյան. 1987, 148:

<sup>54</sup> Թլկատինցի. «Մուրճ» (Թիֆլիս), 1904, 35 (ստորագրված է Թլկատ):

<sup>55</sup> Եսայան. 1959, 30, Եսայան. 1928, 23–24:

<sup>56</sup> Պերպերյան. 2008, 262, 288 (առաջին հրատարակությունը՝ 1871):

<sup>57</sup> Ալիշան. 1896, 227:

<sup>58</sup> Զոհրապ. 2002, 84:

խառնուած լեզուն իր խօսակցութեանը մասնաւոր հրապոյր մը կուտայ» (Զոհրապ. «Վերադարձը»<sup>59</sup>, 1901 թ.), «Անգլիերէն յոյժ բազմաթիւ հրատարակութեանց մէջ կարեւորագոյնն է» (Ի ն տ ր ա. «Շարունակութիւն վկայութեանց»<sup>60</sup>), «Պատերուն վրայ գրուած են Ս. Գրքէն այլեւայլ հատուածներ, հայերէն, յունարէն, անգլիերէն, թուրքերէն» (Բ ա շ ա լ ե ա ն. «Ղալաթիո «րեսդը»<sup>61</sup>, 1889 թ.) և այլն:

Զուգահեռաբար նույն երևույթը տեղի է ունենում գրական արեւելահայերէնում: Օրինակներ՝ «Նորա ազգականների տանը ես տեսա մի քանի անգլիերէն գրքեր կճուճ-բժութների բերանին ծածկած» (Պ ո ռ չ յ ա ն. «Գյուղական վարժապետներ», 1888 թ.<sup>62</sup>), «Անգլիական միսիոնարների շնորհիւ ստացել է շատ լաւ կրթութիւն, ազատ խօսում եւ գրում է անգլիերէն» (Լ ա լ ա յ ա ն. «Վասպուրականի ասորիները»<sup>63</sup>, 1913 թ.):

Անգլիերէն-ը շուտով արձանագրւում է հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում:

Ստ. Մալխասյանցի բառարանում անգլիերէն-ը եռարժեք է՝ գոյական, ածական և մակբայ՝ «անգլիացու լեզուն. անգլիական լեզուով»<sup>64</sup>: Ինքնաշեն մի քանի օրինակից հետո բառարանագիրը փակագծերում լրացուցիչ տեղեկութիւն է հաղորդում. «Ներկայումս յաճախ գործ է ածվում անգլերէն»: Եվ ուշագրավ է, որ անգլերէն-ն այս բառարանում գլխաբառ չի դարձել. Ստ. Մալխասյանցի համար այն համարաբար առաջնային տարբերակ չէր դեռեա: Լեզվական փաստերը վկայում են, որ XX դարի 20-ական թվականներին արեւելահայերէնում անգլիերէն-ը գործածական էր: Օրինակներ՝ «Դա անգլիերէն նշանակում է ընծա: Ամերիկյան անգլիերէնում նշանակում է պարզեւբայխութիւն» (Դ ե մ ի ը ճ յ ա ն. «Ժամանակակից վարք սրբոց, մարգարեից, դպրաց և փարիսեցոց և գործք առաքելոց», 1925 թ.) և «Շատ ուրախ հարսանիք եղավ. պար, դուդուկ, սազանդար, ծափ, չախկարա, տուշ ... (իհարկե անգլիերէն)» (Դ ե մ ի ը ճ յ ա ն. «Անգլիական հարսանիք»<sup>65</sup>, 1927 թ.):

Ճիգմեճյան վարդապետի բառարանում, որը լույս է տեսել Մալխասյանցի բառարանից տասը տարի անց, անգլիերէն լեզվանունը միայն ածականի արժեքով է ներկայացվել՝ «Անգլիոյ ժողովուրդին մէջ խօսուող լեզուն», որը գոյականի բացատրութիւն է<sup>66</sup>:

Հովհ. Բարսեղյանն ուղղագրական ծավալուն բառարանում անգլիերէն բառի դիմաց «անհանձնարարելի» նշում է արել՝ որպէս հանձնարարելի տալով անգլիերէն-ը<sup>67</sup>: Այդ շրջանում անգլիերէն-ը Հայաստանում (արեւելահայերէնում)

<sup>59</sup> Զ ո հ Ր ա պ. 2001, 189:

<sup>60</sup> Ի ն տ Ր ա. 2014, 260:

<sup>61</sup> Բ ա շ ա լ ե ա ն. 2018, 41:

<sup>62</sup> Պ ո ռ չ յ ա ն. 1964, 16, 718:

<sup>63</sup> Լ ա լ ա յ ա ն. 1913, 189:

<sup>64</sup> Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944, 101:

<sup>65</sup> Դ ե մ ի ը ճ յ ա ն. 1982, 93, 377: Այլ հրատարակութեան մէջ լեզվանունը երկու դեպքում էլ «արդիականացվել է»՝ դառնալով անգլիերէն (Դ ե մ ի ը ճ յ ա ն. 1977, 196, 380):

<sup>66</sup> Ճ ի գ մ է ճ ե ա ն. 1954, 215:

<sup>67</sup> Բ ա Ր ս ե Ղ յ ա ն. 1973, 54:

գործածվող միակ ձևն էր, ուստի թերևս նպատակահարմար կլիներ անգլիերեն-ի դիմաց պարզապես գրել «Հնացած»:

Երկու բառարանում անգլիերէն — անգլերեն բառազույգը դիտարկվել է որպես արևմտահայերենի ու արևելահայերենի տարբերություն<sup>68</sup>: Մեր կարծիքով այս տարբերությունը հայերենի զարգացման արդի ենթափուլում վերացել է, և այս զանազանությունը պետք է ներկայացվի իբրև պատմական իրողություն:

Արևմտահայերենի միաբեզվյան և թարգմանական նոր բառարաններում գետեղված է միայն անգլերէն-ը: Համեմատենք XX դ. կեսերին և XXI դ. երկրորդ տասնամյակում լույս տեսած հայերեն-գերմաներեն բառարանների բառացանկերը. առաջինում անգլիերէն է<sup>69</sup>, երկրորդում անգլերէն<sup>70</sup>:

Ավելի ցայտուն է (արևմտահայերեն-անգլերեն բառարանագրության հետևյալ օրինակը: XX դարի կեսին Մ. Գույումճյանի բառարանի վերնագրում անգլիերէն լեզվանունն է կիրառվել, իսկ նրա այժմեականացված տարբերակում անգլերէն-ը<sup>71</sup>:

Հետաքրքրական են բառացանկերի իրողությունները: Մ. Գույումճյանը բառացանկում կողք կողքի ներկայացրել է անգլիերէն և անգլիերէն տարբերակները<sup>72</sup>, որ նշանակում է՝ այդ շրջանում տակավին զուգաձևություն կար: Բայց բառարանի թարմացված տարբերակում միայն անգլերէն-ն է, ընդ որում՝ լեզվանվան ի-ն հանվել է, սակայն բառը չի տեղաշարժվել, և այբբենական կարգը խախտելով անգլերէն-ը հաջորդում է անգլիական, անգլիամոլություն, անգլիացի բառերին<sup>73</sup>:

### Անգլերեն

XX դարի երկրորդ կեսից սկսած՝ ժամանակակից հայերենի գրական երկու դրսևորումներում՝ արևելահայերենում ու արևմտահայերենում, ամրակայվում է անգլերեն տարբերակը, որն անգլիերեն-ի համեմատ ավելի կարճ է, արտասանության տեսանկյունից՝ դյուրահունչ:

Մալխասյանցի բառարանից սնված բացատրական ընդարձակ բառարանները գեղչել են անգլիերէն լեզվանունը. ակադեմիական, էդ. Աղայանի արևմտահայերենի բեյրության երկհատոր բացատրական բառարաններում գլխաբառ է դարձել միայն անգլերեն / անգլերէն-ը<sup>74</sup>: Պատկերը նույնն է թարգմանական բառարաններում<sup>75</sup>:

Անդրադառնալով անգլիերեն / անգլերեն տարբերակներին առնչվող բառակազմական մի խնդրի: Ժամանակին Անգլիա, անգլիացի, անգլիերեն բառերի

<sup>68</sup> Ս ա Ր Գ ս յ ա ն. 1991, 19, Ս ա ք ա պ ե տ ո յ ա ն. 2011, 23:

<sup>69</sup> Froundjian. 1952, 18.

<sup>70</sup> Թ ո Ր Ո Ս Ե ա ն. 2019, 28:

<sup>71</sup> Հ մ մ տ. Գ ու յ ու մ ճ ե ա ն. 1950, Գ ու յ ու մ ճ ե ա ն. 1981 (առաջին հրատարակությունը՝ 1961) և Գ ու յ ու մ ճ ե ա ն. 2002:

<sup>72</sup> Գ ու յ ու մ ճ ե ա ն. 1950, 27:

<sup>73</sup> Գ ու յ ու մ ճ ե ա ն. 2002, 15:

<sup>74</sup> Ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց հ ա յ ո ց լ ե զ վ ի բ ա ց ա տրական բառարան. 1969, 82, Ա ղ ա յ ա ն. 1976, 50, Ճ է ր է ճ ե ա ն, Տ օ ն ի կ ե ա ն. 1992, 82:

<sup>75</sup> Խ ն դ Ր ու ն ի, Գ ու շ ա գ ճ ե ա ն. 1970:



յուններ՝ անգլիացուց բարբառ, անգլիացուց լեզու, անգլիական / անգլիական բարբառ և անգլիական լեզու:

2. Բառակապակցություն լեզվանուններին հաջորդել են (գուցեև դրանց գուգահեռ կազմվել են) անգլիացիների լեզուն անվանող բառեր: Շրջանառության մեջ են եղել լեզվանվան հինգ տարբերակներ՝ անգլիարեն, անգլիերեն, անգլիարեն, անգլիերեն և անգլերեն / անգլերեն, որոնք տարբերվում են և / ի լծորդ հնչյուններով և -արեն / -երեն տարբերակային ածանցներով, ի բաղադրիչի առկայությամբ կամ բացակայությամբ, ածանցի գրությամբ (է / ե հակադրությամբ):

3. Անգլիարեն, անգլիերեն և անգլիերեն տարբերակները բնորոշ են թե՛ արևմտահայերենին, թե՛ արևելահայերենին, անգլիարեն-ը՝ գրական արևմտահայերենին, թեև այստեղ էլ լայն տարածում չի ունեցել: Հայերենի երկու տարբերակներում ներկայումս հաղթել է անգլերեն լեզվանունը. տարբերակայնությունը վերացված է, այն պատմական իրողություն է:

4. Տարբերակների գործածության ժամանակագրական պատկերն այսպիսին է (փակագծերում նշվում է մեզ հանդիպած ամենավաղ վկայությունը)։

- ա) XVIII դարի վերջ (1794 թ.)՝ անգլիացուց բարբառ,
- բ) XIX դարի սկիզբ (1803 թ.)՝ անգլիացուց լեզու,
- գ) XIX դարի առաջին կեսին՝ անգլիարեն (1818 թ.) անգլիական լեզու (1825 թ.), անգլիական բարբառ (1845 թ.), որոնցից տարածվում է անգլիարեն-ը,
- դ) XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի 10-ական թվականներ՝ անգլիերեն (1872 թ.),
- ե) XIX դարի վերջին քառորդից՝ անգլիարեն (1875 թ.) և մինչև XX դարի կեսերը՝ անգլիերեն (1873 թ.),
- զ) XX դարի կեսից մինչև այժմ՝ անգլերեն:

5. Ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի ներկա փուլում քննարկվող լեզվանունը միասնական ձև ունի՝ անգլերեն (ավանդական ուղղադրությամբ՝ անգլերեն):

6. Հայերենի տարբեր բառարաններում գլխաբառ են դարձել բառային ձևավորում ունեցող տարբերակային լեզվանունները՝ անգլիարեն, անգլիերեն, անգլիերեն, անգլերեն / անգլերեն, իսկ անգլիարեն-ը կա մի բառարանի վերնագրում:

7. Անգլիա, անգլիերեն, անգլիացի միավորների հիմքով կազմվել են հայերեն բազմաթիվ բառեր, որոնցում ի բաղադրիչը, որպես կանոն, պահպանվում է: Բառակազմական օրինաչափությունը չխախտելու նպատակով անգլիաբեր, անգլիաբեզու և անգլիախոս բառերը պիտի գործածել բացառապես ի-ով:

Դավիթ Գյուրջիյան – բ. գ. թ., դոցենտ, ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի բառակազմություն և բառակազմական իմաստաբանություն, բառարանագրություն և բառարանագիտություն, խոսքարվեստ, հայերենի ուսուցման հարցեր: Հեղինակ (և համահեղինակ) է դպրոցական և համալսարանական դասագրքերի ու ձեռնարկների, ուսումնական և մեթոդական գրքերի, բառարանների և 80 հոդվածի: gyurjidav@mail.ru

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Գ. 1967, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Երևան, «Հայաստան», 424 էջ:

«Ազդարար» (Մադրաս), հ. 1, 1794, հ. 2, 1794:

Ալիշան Ղ. 1873, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 840 էջ:

Ալիշան Ղ. 1885, Սիսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ. Լեւոն Մեծագործ, Վենետիկ, Ս. Ղազար, 592 էջ:

Ալիշան Ղ. 1895, Հայրուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 706 էջ:

Ալիշան Ղ. 1895, Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եգիպտոսի, Վենետիկ, Ս. Ղազար, 82 էջ:

Ալիշան Ղ. 1896, Հայ-Վենետ կամ յարընջութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ-Դ և ԺԵ-Զ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 556 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 590 էջ:

Ալիշան Ղ. 1901, Արշալոյս քրիստոնէութան Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 398 էջ:

Ալիշան Ղ. 1901, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, հ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 560 էջ:

Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:

Աճառյան Հ. 1955, Լիակատար քերականութիւն հայոց լեզվի. Ներածութիւն, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 656 էջ:

Աճառյան Հ. 2002, Հայ գաղթականության պատմութիւն, Երևան, «Զանգակ-97», 768 էջ:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի. 1865, Բ տպ., Վենետիկ, Ս. Ղազար, 856 էջ:

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց. 1805, Գործք առաքելոց, 14. 10, Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, Վենետիկ, Ս. Ղազար, 880 էջ:

Արփիարյան Ա. 1987, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 524 էջ:

Արսէն Կոմիտաս Բագրատունի. 1852, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1852, 778 էջ:

Ազերեան Յարութիւն վրդ. 1819, Քերականութիւն հայերէն և անգղիական, Վենետիկ, Ս. Ղազար, 334 էջ:

Ազերեան Յարութիւն վրդ. 1821, Բառարան անգղիարէն եւ հայերէն, Վենետիկ, Ս. Ղազար, 983 էջ:

Ազերեան Յարութիւն վրդ., Պրէնտեան Յովհ. 1868, Բառարան անգղիարէն և հայերէն, Բ տպագր., Վենետիկ, Մխիթարեանց տպ., 842 էջ:

Աւետիքեան Հ. Գաբրիէլ, Սիւրմէլեան Հ. Խաչատուր, Ազերեան Հ. Մկրտիչ. 1836, հ. Ա, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Ս. Ղազար, 1140 էջ:

Աւետիքեան Հ. Գաբրիէլ, Սիւրմէլեան Հ. Խաչատուր, Ազերեան Հ. Մկրտիչ. 1837, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1067 էջ:

«Բազմավէպ» (Վենետիկ), 1847, թիւ 23:

Բաշալեան Լ. 2018, Նորավեպեր եւ պատմութիւնք, Երևան, «Անտարես», 286 էջ:

Բարլեզիզյան Ա. 2009, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 976 էջ:

Բարսեղյան Հ. Խ. 1973, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս», 980 էջ:

Գասպարյան Գ. Կ. 1968, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 566 էջ:

Գյուրջինյան Ղ. 2019, Հանուն մեր նյարդերի: Գրառումներ հայոց լեզվի այսօրվա խնդիրների մասին, Երևան, «Էդիթ Պրինտ», էջ 176:

Գյուրջինյան Ղ. 2020, Հայերենի ուղղագրական բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ», 128 էջ:

Գյուրջինյան Ղ. 2021, № 2, Բալթիական լեզուների հայերեն անունների տարբերակայնության մասին. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», էջ 217–239:

Գյուրջինյան Ղ. 2021, № 3, Արամեացիների լեզվի հայերեն անունը. – «Հայագիտական հանդես», էջ 3–17:

Գյուրջինյան Ղ. 2021, № 3, Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման պատմությունը. – «Բանբեր հայագիտության», էջ 216–231:

Գյուրջինյան Ղ. 2021, № 4, Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները. – «Հայագիտական հանդես», էջ 3–17:

Գյուրջինյան Ղ. 2021, Հնդկական լեզուների անունները հայերենում. Գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր, Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարը. – Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, էջ 17–37:

Գույումձեան Մ. Կ. 1950, Ընդարձակ բառարան հայերենի անգլիերեն, Կահիրե, «Սահակ-Մեսրոպ» տպ., 1152 էջ:

Գույումձեան Մ. Կ. 1981, Ընդարձակ բառարան անգլիերենի հայերեն, Բ տպ., Բեյրութ, «Տոնիկեան և Որդիք», 1416 էջ:

Գույումձեան Մ. Կ. 2002, Գրպանի նոր բառարան անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, այժմեականացուց Լ. Թորոսեան, Բեյրութ, «Շիրակ», 314 էջ:

Դեմիրճյան Ղ. 1977, Երկեր երկու գրքով, գիրք երկրորդ. Մանրապատումներ, երգիծանք, Երևան, «Սովետական գրող», 656 էջ:

Դեմիրճյան Ղ. 1982, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 679 էջ:

Եսայան Զ. 1928, Պրոմէթեոս ազատագրուած (Ճամբորդական նոթեր), Մարսել, տպ. Թագուր Խաչիկեան, 368 էջ:

Եսայան Զ. 1959, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 592 էջ:

Զոհրապ Գր. 2001, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 640 էջ:

Զոհրապ Գր. 2002, Երկերի ժողովածու, հ. Գ, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 704 էջ:

Թարգմանութիւն յօդուածոյ միոյ. – «Ազդարար» (Մադրաս), 1794, թիւ 1:

Թլկատինցի. Զալըմ տղան. – «Մուրճ» (Թիֆլիս), 1904, հ. 1, էջ 32–52:

Թորոսեան Լ. 2019, Ընդարձակ բառարան Հայերեն-Գերմաներեն, Վիեննա, 765 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, հ. 1, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 602 էջ:

Ինտրա. 2014, Հովին ծայնը. Երկեր, գիրք Բ, Երևան, «Սարգիս Խաչենց», 456 էջ:

Իսավերտենց 3. 1880, Կրթարան անգղիական լեզուի, տետր Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 26 էջ:

Լալայեան Ե. 1913, Վասպուրականի ասորիները. – «Ազգագրական հանդես» (Թիֆլիս), հ. XXIV, էջ 181–232:

Խլղաթյան Ֆ. Հ. 1982, Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Երևան, «Հայաստան», 168 էջ:

Խնդրունի Տ. վերապատվելի, Գուշազեան Մ. 1970, Հայերեն անգլերեն արդի բառարան, Բեյրութ, «Կ. Տոնիկեան եւ Որդիք», 416 էջ:

Խուղաբաշյանց Ալ. 1838, Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ, հ. 1, Մոսկվա, տպագրատուն Հայկական ձեմարանի տեարց Լազարեանց, 616 էջ:

«Կռունկ Հայոց աշխարհին» (Թիֆլիս), 1862, թիւ ԺԱ, թիւ Ը, թիւ Թ:

Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.). 2013, հ. 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 372 էջ:

Հայկական համաբարբառ 1. 1972, Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի «Եղծ աղանդոց», կազմեց Ժ. Բ. Թոսունյան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 842 էջ:

Հայկական համաբարբառ 4/1. 1973, Ազաթանգեղոս. Պատմութիւն Հայոց, կազմեցին Օ. Մ. Խաչատրյան և ուրիշներ, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 786 էջ:

Հայկական համաբարբառ 7/1. 1975, Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, կազմեցին Օ. Մ. Խաչատրյան, Հ. Վ. Սարգսյան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 880 էջ:

«Հիւսիսափայլ» (Մոսկվա), 1861, թիւ 11:

Ճէրէճեան Գնէլ արք., Տոնիկեան Փ. Կ. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, «Կ. Տոնիկեան եւ Որդիք» հրատարակչատուն, 1306 էջ:

Ճիզմէճեան Պետրոս վրդ. 1954, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 1, Հալեպ, 726 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 608 էջ:

Միջին դարերի պատմություն. 1975, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 824 էջ:

Մխիթար Սեբաստացի. 1749, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1252 էջ:

Մուրադյան Հ. Դ. 1982, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1. Հնչյունաբանություն, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ:

Ներսէս Շնորհալի. 1818, Աղօթք Ներսիսի Կլայեցոյ: Վեշտասանլեզուեան. Հայերէն գրաբառ, Հայերէն աշխարհաբառ, Յունարէն գրաբառ, Յունարէն աշխարհաբառ, Լատիներէն, Իտալերէն, Գաղղիերէն, Սպաներէն, Գերմաներէն, Անգղիարէն, Հոլլանդերէն, Ղաղմատերէն, Սերվիաներէն, Հունգարերէն, Տաճկերէն և Թաթարերէն հայկական տառիւք, Վենետիկ, Ս. Ղազար, 204 էջ:

Պայեան Հ. Գէորգ. 1926, Բառարան հայերէն-գաղղիերէն, հ. Ա, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1148 էջ:

Պարոնյան Հ. 1964, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 408 էջ:

Պարոնյան Հ. 1964, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 424 էջ:

Պարոնյան Հ. 1968, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 438 էջ:

Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարաբյուլյան Թ. Ա. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 318 էջ:



Պետրոսեան Մատթիա վրդ. 1875–79, Նոր բառգիրք հայ-անգլիարէն, Վենետիկ, Ս. Ղազար, 786 էջ:

Պերպերյան Ա. 2008, Պատմություն հայոց, Բ հրատ., Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 600 էջ:

Պէտրիեան Պ. Ս. 2010, Հայերէն-անգլերէն, անգլերէն-հայերէն գործնական բառարան (անգլիախօս արեւմտահայերու եւ արեւելահայերու համար), Երևան, «Անտարես», 368 էջ:

Պռոշյան Պ. 1964, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, Հայպետհրատ, 724 էջ:

Պրէնտեան Յովհ., Աւգերեան Հ. Յարութիւն վրդ. 1825, Բառարան հայերէն եւ անգղիական, Վենետիկ, Ս. Ղազար, 640 էջ:

Սարգսյան Ա. 1991, Արեւմտահայերէնի բառարան, Երևան, «Արկիկ», 320 էջ:

Սաքապետոյան Ռ. Կ. 2011, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երևան, «Տիգրան Մեծ», 382 էջ:

Սիմէօնեան Ս. 1803, Փոքրիկ բառագիր Անգլիացւոց լեզուէ՝ թարգմանեալ ի հայ բարբառ, Մադրաս, տպ. Տեր Հարություն Շմավոնյան Շիրազեցու, 142 էջ:

Տնտեսութիւն մարդկային կենաց: Խրատը պիտանիք (Առածք սինէականք). 1845. (տիտղոսաթերթից) թարգմանեալք ի սինէացւոց լեզուէ յԱնգլիական բարբառ: Փոխեաց ի մերս՝ Գէորգ Աւետ Չաքարեան Ջուղայեցի ի Պաթաւիա (Առածք սինէականք), Վենետիկ, Ս. Ղազար, 76 էջ:

Րաֆֆի. 1983, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Սովետական գրող», 480 էջ:

Րաֆֆի. 1986, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, «Սովետական գրող», 480 էջ:

Րաֆֆի. 1955, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, Հայպետհրատ, 544 էջ:

Րաֆֆի. 1991, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, «Նաիրի», 542 էջ:

Րաֆֆի. (Հ. Մելիք-Հակոբյան). 1861, Արգոյ բարեկամ, Յովհաննէս Քաթանեանց. – «Հիսիսափայլ» (Մոսկվա), հ. 11, էջ 393–399:

Froundjian D. 1952, Armenisch-Deutsches Wörterbuch, München, Verlag von R. Oldenbourg, S. 560.

## ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ НАЗВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ДАВИД ГЮРДЖИНЯН

### Резюме

*Ключевые слова: название языка, вариативность, историческая лексикология, развитие лексики, стандартизация, словообразовательная закономерность, անգլիացւոց լեզու «язык англичан», անգլիարէն / անգլիերէն / անգլիարէն / անգլիերէն / անգլերեն «английский язык», лексикографическая традиция, унификация названия языка.*

По аналогии соответствующих структур армянского языка V века для обозначения понятия «английский язык» сначала были использованы словосочетания: անգլիացւոց բարբառ «речь англичан», անգլիացւոց լեզու «язык англичан», անգլիական / անգլիական բարբառ «английская речь» и անգլիական լեզու «английский язык». С конца XVIII века в ар-

мянском языке употребляются пять вариантов названия языка: **անգղիարէն**, **անգղիերէն**, **անգլիարէն**, **անգլիերէն** և **անգլերեն** / **անգլերէն**, которые отличаются звуками **լ** / **ղ**, вариативными суффиксами **-արէն** / **-երէն**, наличием или отсутствием компонента **ի**.

Варианты **անգղիարէն**, **անգղիերէն** и **անգլիерէն** характерны как западноармянскому, так и восточноармянскому, **անգլիарէն** – литературно-му западноармянскому языку, хотя и здесь он не имел широкого распространения. В обоих вариантах армянского языка в настоящее время вариативность названия английского языка устранена, победил **անգլերեն** «английский язык».

Хронологическая картина использования вариантов выглядит так (в скобках указаны самые ранние свидетельства по нашим данным):

- а) конец XVIII века (1794) – **անգղիացւոց բարբառ** «речь англичан»,
- б) начало XIX века (1803) – **անգղիացւոց լեզու** «язык англичан»,
- в) первая половина XIX века – **անգղիարէն** «английский» (1818), **անգղիական լեզու** «английский язык» (1825), **անգղիական բարբառ** «английская речь» (1845),
- г) со второй половины XIX века по 10-е годы XX века – **անգղիերէն** «английский» (1872),
- д) с последней четверти XIX века до середины XX века – **անգլիерէն** «английский» (1873), словообразовательный вариант – **անգլիарէն** (1875),
- е) с середины XX века по настоящее время – **անգլերեն** «английский язык».

В современном восточноармянском и западноармянском литературных языках название английского языка имеет единую форму – **անգլերեն**.

*Давид Гюрджинян – к. филол. н., доцент, председатель Комитета по языку РА. Научные интересы: словообразование и словообразовательная семантика армянского языка, лексикография и теория лексикографии, искусство речи, вопросы обучения армянскому языку. Автор (и соавтор) школьных и университетских учебников и пособий, учебных и методических книг, словарей и 80 статей. gyurjidav@mail.ru*

## HISTORICAL DEVELOPMENT OF THE NAME OF THE ENGLISH LANGUAGE IN THE ARMENIAN LANGUAGE

DAVIT GYURJINYAN

### Summary

*Key words: name of language, variability, historical lexicology, development of vocabulary, standardization, derivational pattern, **անգղիացւոց լեզու** “Language of Englishmen”, **անգղիարէն** / **անգղիերէն** / **անգլիարէն** / **անգլիերեն***

րէն / անգլերեն “English language”, lexicographic tradition, unification of the language name.

By analogy of the relevant structures of the Armenian language of the 5th century AD to designate the concept of “English language” were first used by the phrase: անգլիացւոց բարբառ “speech of the Englishmen”, անգլիացւոց լեզու “language of the Englishmen”, անգլիական / անգլիական բարբառ “English speech” and անգլիական լեզու “English language”. From the end of the 18th century in Armenian language, five versions of language names are used: անգլիարէն, անգլիերէն, անգլիարէն, անգլիերէն եւ անգլերեն / անգլերէն, which are characterized by sounds լ/ղ, by variative suffixes -արէն / -երէն, the presence or the absence of a component ի.

The variants անգլիարէն, անգլիերէն and անգլիերէն are characteristic of both Western Armenian and Eastern Armenian, անգլիարէն – literary Western Armenian language, although it was not widespread here either. In both variants of the Armenian language, the variability of the name of the English language has now been eliminated, անգլերեն “English language” has won.

The chronological picture of the use of the variants looks like this (in parentheses are the earliest evidence according to our data):

- a) the end of the 18th century (1794) – անգլիացւոց բարբառ “the speech of the Englishmen”,
- b) the beginning of the 19th century (1803) – անգլիացւոց լեզու “the language of the Englishmen”,
- c) the first half of the 19th century – անգլիարէն “English” (1818), անգլիական լեզու “English language” (1825), անգլիական բարբառ “English speech” (1845),
- d) from the second half of the 19th century to the 1910s – անգլիերէն “English” (1872),
- e) from the middle of the 20th century to the present – անգլերեն “English”.

In the modern Eastern Armenian and Western Armenian languages, the name of the English language has a single form անգլերեն “English”.

*Davit Gyurjinyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor, President of the Language Committee of the RA. Scientific interests: word formation and word-formation semantics of the Armenian language, lexicography and the theory of lexicography, art of speech, issues of teaching the Armenian language. Author (and co-author) of numerous school and university textbooks and manuals, educational and methodical books and 80 articles. gyurjidav@mail.ru*